

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՀ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

28.05.2013

Հարգելի հայրենակիցներ,

95 տարի առաջ մեր հայրերը պատմական սխրանք գործեցին՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի ճակատամարտերում կենաց-մահու կռվով կանգնեցնելով թուրքական բանակի մուտքը դեպի մեր սրբազան հողի այն հատվածները, որոնք զերծ էին մնացել թուրքական նվաճումներից եւ ցեղասպանության սպառնալիքներից: Այդ հերոսական ու պատմական հաղթանակների արդյունքում էլ 543 տարվա ընդմիջումից հետո վերականգնվեց Հայոց պետականությունը, որի հիմքի վրա էլ զարգացան եւ բարձրացան Հայաստանի Խորհրդային եւ Հայաստանի Երրորդ Հանրապետությունները: Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության տոնի առթիվ ջերմորեն շնորհավորում եմ Հայաստանի, Արցախի ու Սփյուռքի մեր հայրենակիցներին, մաղթում խաղաղ երկինք, քաջառողջություն, երջանկություն, նոր հաղթանակներ ու ձեռքբերումներ համայն հայության սրբազան հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության հետագա հզորացման ու ծաղկման հաստատուն ճանապարհին: Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ Ռ.Գրիգորյան